Բ Ա Ց Ա Տ Ր Ա Գ Ի Ր

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ

«Հայաստանի Հանրապետության 2007 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծով առաջարկվում է ՀՀ 2007 թվականի պետական բյուջեն հաստատել՝ եկամուտների գծով (ներառյալ պաշտոնական տրանսֆերտների տեսքով ստացվող մուտքերը)՝ 489.5 մլրդ դրամ, ծախսերի գծով՝ 557.8 5մլրդ դրամ, իսկ դեֆիցիտը՝ 68.3 մլրդ դրամ:

Հարկ է նշել, որ ՀՀ 2007 թվականի պետական բյուջեի նախագծի դեֆիցիտի գումարը՝ 68.3 մլրդ դրամը, ՀՀ 2006 թվականի պետական բյուջեով հաստատված և ՀՀ 2005 թվականի պետական բյուջեի կատարման արդյունքներով փաստացի ձևավորված համադրելի ցուցանիշների նկատմամբ նախատեսված է համապատասխանաբար՝ 1.5 մլրդ դրամ նվազեցումով և 25.6 մլրդ դրամ ավելացումով: ՀՀ 2007 թվականի պետական բյուջեի նախագծի դեֆիցիտի և 2007 թվականի ծրագրվող ՀՆԱ-ի տոկոսային հարաբերությունը կանխատեսվում է 2.3%-ի չափով, 2006 թվականի համար ծրագրված և 2005 թվականի փաստացի ցուցանիշների՝ համապատասխանաբար 2.9%-ի և 1.9%-ի դիմաց: ՀՀ 2007 թվականի պետական բյուջեի նախագծի դեֆիցիտի ֆինանսավորման համար նախատեսվում է ներգրավել շուրջ 133.4 մլն ԱՄՆ դոլարին համարժեք դրամի չափով վարկեր, որոնց զգալի մասը կտրամադրվի Համաշխարհային բանկի կողմից (ներգրավվող վարկերի տրամադրման ժամկետների և տոկոսադրույքների մասին տվյալները ներկայացված են սույն բացատրագրի N 1 հավելվածում և N 18 աղյուսակում):

ՄԱՍ I

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Հայաստանի Հանրապետության 2007 թվականի պետական բյուջեի նախագծում (այսուհետ սույն մասում՝ Նախագիծ) եկամուտների (ներառյալ պաշտոնական տրանսֆերտները) ընդհանուր գումարը ծրագրվել է 489.5 մլրդ դրամի չափով կամ 2006 թվականի համար հաստատված 436.3 մլրդ դրամ[1], սպասողական 451.3 մլրդ դրամ և 2005 թվականին փաստացի ստացված[2] 358.8 մլրդ դրամ մուտքերի համեմատությամբ համապատասխանաբար 12.2%-ով, 8.5%-ով և 36.4%-ով ավելի: Ակնկալվում է, որ 2007 թվականին բյուջետային մուտքեր/ՀՆԱ հարաբերությունը կկազմի 16.8%՝ 2006 թվականի ծրագրային 16.9%-ի[3], սպասողական 17.5%-ի և 2005 թվականի փաստացի 16.0%-ի դիմաց: 2007 թվականի բյուջետային մուտքերի կազմում մեծ տեսակարար կշիռ կունենան հարկերն ու պետական տուրքերը՝ 93.8%, ոչ հարկային եկամուտները կապահովեն տարեկան բյուջետային մուտքերի 2.3%-ը, իսկ կապիտալի գործառնություններից ստացվող եկամուտներն ու տրանսֆերտները՝ համապատասխանաբար 0.8%-ը և 3.1%-ը:

ՀՀ 2005-2007թթ պետական բյուջեների կառուցվածքն ըստ եկամուտների հիմնական խմբերի ներկայացվում է հետևյալ գծապատկերով.

---

[1] Այստեղ և այսուհետ սույն մասում որպես 2006 թվականի հաստատված ցուցանիշներ ներկայացվում են «ՀՀ 2006 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով հաստատված և նույն օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ կետով սահմանված և նույն օրենքի 11-րդ կետով ՀՀ կառավարությանը վերապահված իրավասությունների շրջանակներում ավելացված գումարների հանրագումարը, որը 01.10.06թ դրությամբ կազմել է 23.9 մլրդ դրամ:

[2] Համեմատվող ցուցանիշների համադրելիությունն ապահովելու նպատակով այստեղ և այսուհետ սույն մասում ՀՀ 2005 թվականի պետական բյուջեի փաստացի մուտքերի կազմում ներառված չեն 2005 թվականին փաստացի ստացված 15.9 մլրդ դրամի չափով մուտքերը, այդ թվում՝

- «ՀՀ 2005 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն ՀՀ 2005 թվականի պետական բյուջեից ֆինանսավորված գումարների գծով՝ 8.1 մլրդ դրամ եկամուտները (ԱԱՀ-ի գծով՝ 7.8 մլրդ դրամ, պետական տուրքերի գծով՝ 0.3 մլրդ դրամ):
- ՀՀ պետական կառավարման մարմինների 2005 թվականի արտաբյուջետային միջոցների եկամուտները, ընդամենը՝ 6.7 մլրդ դրամ:
- «ՀՀ 2005 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 19-րդ կետի համաձայն ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցված հողամասերի նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչման դեպքում օրենքի համապատասխան կատարվող վճարների գծով փաստացի ստացված 1.1 մլրդ դրամը:

[3] Այստեղ և այսուհետ սույն մասում ՀՆԱ-ի նկատմամբ 2006 թվականի համար հաստատված ցուցանիշների հարաբերության հաշվարկներում օգտագործվել է 2006 թվականի ՀՆԱ-ի ներկայումս կանխատեսվող մեծությունը:

Գծապատկեր 3.1.ՀՀ 2005-2007թթ պետական բյուջեների կառուցվածքը



ՀՀ 2007-2009թթ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով (այսուհետ սույն մասում՝ ՄԺԾԾ) 2007 թվականի համար պետական բյուջեի եկամուտները (ներառյալ պաշտոնական տրանսֆերտները) նախատեսվել են 447.6 մլրդ դրամի չափով: Նախագծով ծրագրված բյուջետային մուտքերը ՄԺԾԾ-ով նախատեսված ցուցանիշների համեմատությամբ ըստ եկամուտների հիմնական խմբերի կրել են հետևյալ փոփոխությունները:

Աղյուսակ 3.1. ՀՀ 2007 թվականի պետական բյուջեի եկամուտների՝ ՄԺԾԾ-ով հաստատված և Նախագծով առաջարկվող գումարները (մլրդ դրամ)

Եկամտատեսակը	ՄԺԾԾ-ով հաստատված	Նախագծով առաջարկվող	տարբերություն (ՄԺԾԾ-Նախագիծ)
Ընդամենը եկամուտներ և պաշտոնական տրանսֆերտներ	447.6	489.5	-41.9
Հարկային եկամուտներ և պետական տուրք	421.4	458.9	-37.5
Ոչ հարկային եկամուտներ	7.1	11.4	-4.3
Կապիտալի գործառնություններից ստացվող եկամուտներ	4.1	4.1	0.0
Պաշտոնական տրանսֆերտներ	15.0	15.2	-0.2

2007 թվականի համար ՄԺԾԾ-ով հաստատված և Նախագծով առաջարկվող եկամուտների տարբերությունների հիմնավորումները ներկայացված են ստորև՝ եկամուտների հիմնական խմբերի նկարագրությանը վերաբերվող սույն բացատրագրի առանձին բաժիններում:

Ի - Ա. ԸՆԹԱՑԻԿ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Նախագծով ընթացիկ եկամուտները (հարկային եկամուտներ, պետական տուրքեր և ոչ հարկային եկամուտներ) ծրագրվել են 470.3 մլրդ դրամի չափով, որը 2006 թվականի համար հաստատված[4],

[4] «ՀՀ 2006 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով ընթացիկ եկամուտների գծով հաստատված մուտքերից բացի ներառված է նաև նույն օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ մասով ՀՀ կառավարությանը վերապահված իրավասությունների շրջանակներում 01.10.06թ դրությամբ կատարված 14.7 մլրդ դրամի չափով ավելացումները:

սպասողական և 2005 թվականի փաստացի[5] համապատասխան մակարդակները գերազանցում է 84.1 մլրդ դրամով, 70.3 մլրդ դրամով, 135.4 մլրդ դրամով:

2007 թվականի ընթացիկ եկամուտների ծրագրային գումարը կազմում է տվյալ տարվա համար կանխատեսված ՀՆԱ-ի 16.1%-ը՝ 2006 թվականի հաստատված 15.0%-ի, սպասողական 15.5%-ի և 2005 թվականի փաստացի 14.9%-ի դիմաց:

Ընթացիկ եկամուտների գերակշիռ մասը՝ 97.6%-ը կամ 458.9 մլրդ դրամը կազմում են հարկային եկամուտները և պետական տուրքերը, իսկ մնացած 2.4%-ը կամ 11.4 մլրդ դրամը՝ ոչ հարկային եկամուտները:

2005 թվականի տարեկան փաստացի, 2006 թվականի սպասողական, 2007 թվականի համար ծրագրված ընթացիկ եկամուտների համեմատականն՝ ըստ ընթացիկ եկամուտների հիմնական խմբերի ներկայացված է սույն բացատրագրի N 1 աղյուսակում:

1. ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ

Հարկային եկամուտները և պետական տուրքերը 2007 թվականի համար Նախագծում ծրագրվել են 458.9 մլրդ դրամի կամ ընթացիկ տարվա համար հաստատված[6] և 2005 թվականի փաստացի[7] մուտքերից համապատասխանաբար 21.4%-ով և 46.4%-ով ավելի:

ՄԺԾԾ-ով 2007 թվականի հարկային եկամուտները և պետական տուրքերը նախատեսվել են 421.4 մլրդ դրամի չափով: Նախագծով նախատեսված եկամուտները ծրագրվել են ՄԺԾԾ-ի կազմման հիմքում դրված մակրոտնտեսական ցուցանիշների թարմացված կանխատեսումների հիման վրա:

Կանխատեսվում է, որ հարկային եկամուտների և պետական տուրքերի գծով 2007 թվականի մուտքերի աճի տեմպը առաջանցիկ կլինի ՀՆԱ-ի անվանական աճի տեմպի նկատմամբ (հարկային սահմանության գործակիցը[8] գերազանցում է 1-ը): Հարկային եկամուտների և պետական տուրքերի գծով 2007 թվականի մուտքերը կկազմեն ՀՆԱ-ի 15.7%-ը՝ 2006 թվականի ծրագրային 14.7%-ի և 2005 թվականի փաստացի 14.0%-ի դիմաց:

2007 թվականին տնտեսության զարգացման կանխատեսվող սցենարը բնութագրող մակրոտնտեսական առանձին ցուցանիշներ էական ազդեցություն կունենան հարկային եկամուտների հավաքագրման վրա: Հարկային եկամուտների աճի վրա որոշակի ազդեցություն կունենա առաջիկա տարվա համար իրական ՀՆԱ-ի 9.0% տարեկան աճը, անվանական ՀՆԱ-ի ճյուղային կառուցվածքում ակնկալվող փոփոխությունները, ինչպես նաև դրամային արտահայտությամբ հաշվարկված ապրանքների ներ-

---

[5] Առանց ՀՀ 2005 թվականի պետական բյուջեից կատարված՝ սույն մասի տողատակի 2-րդ ծանոթության մեջ նշված այն եկամուտների, որոնք հաշվառվում են ընթացիկ եկամուտների կազմում:

[6] «ՀՀ 2006 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով հարկային եկամուտների գծով հաստատված մուտքերից բացի ներառված է նաև նույն օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ մասով ՀՀ կառավարությանը վերապահված իրավասությունների շրջանակներում 01.10.06թ դրությամբ կատարված 13.6 մլրդ դրամի չափով ավելացումները:

[7] Առանց ՀՀ 2005 թվականի պետական բյուջեից կատարված՝ սույն մասի տողատակի 2-րդ ծանոթության մեջ նշված այն եկամուտների, որոնք հաշվառվում են հարկային եկամուտների և պետական տուրքերի կազմում:

[8] Հաշվարկվում է որպես հարկային եկամուտների և ՀՆԱ-ի տոկոսային աճերի հարաբերություն:

մուծման ծավալների 13.5% աճը (դոլարային արտահայտությամբ): Ինչպես և նախորդ տարիներին, 2007 թվականի հարկային եկամուտները ծրագրելիս օգտագործվել են այն մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումները, որոնք էական ազդեցություն ունեն առանձին հարկատեսակների հարկման բազայի ձևավորման վրա: Մասնավորապես կանխատեսումներում կիրառվել են հետևյալ մակրոտնտեսական ցուցանիշները.

Աղյուսակ 3.2. Հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումները 2007թ համար

Ցուցանիշներ	2007 թվական
Անվանական ՀՆԱ (մլրդ դրամ)	2,922.4
ՀՆԱ-ի իրական աճ	9.0%
ՀՆԱ-ի դեֆլյատոր	4.0%
1 ԱՄՆ դոլարի միջին տարեկան փոխարժեքը դրամով	357
1 եվրոյի միջին տարեկան փոխարժեքը դրամով	466
Ապրանքների ներմուծում (մլն ԱՄՆ դոլար)	2,151.0
Ապրանքների ներմուծման աճի տեմպը	13.5%

Ներկայացված մակրոտնտեսական շրջանակում տնտեսության զարգացման կանխատեսվող միտումներից բացի, եկամուտների ծրագրային ծավալը կապահովվի նաև ի հաշիվ տնտեսական այլ բնույթի գործոնների, ինչպես նաև հարկային (այդ թվում՝ մաքսային) վարչարարության բարելավման և օրենսդրական փոփոխությունների: Ըստ վերջին 2 գործոնների 2007 թվականի համար ծրագրվել է 52.9 մլրդ դրամ, որից 48.4 մլրդ դրամն ակնկալվում է հավաքագրել վարչարարական միջոցառումների իրականացումից: Պետական բյուջեի հարկային եկամուտների հավաքագրումն ապահովող հիմնական միջոցառումների ծրագիրը ներկայացված է ՄԺԾԾ-ում:

Այսպիսով, հարկային եկամուտների գծով 2007 թվականի 458.9 մլրդ դրամի չափով բյուջետային մուտքերը ծրագրվել են՝ հաշվի առնելով երեք հիմնական գործոնների ազդեցություն: Դրանցից առաջինը նախորդ տարիների հավաքագրման ու մակրոտնտեսական միջավայրի զարգացման միտումներն են, երկրորդը՝ հարկային վարչարարության բարելավումը և ՀՀ օրենսդրության հնարավոր փոփոխությունը, իսկ երրորդը՝ տնտեսական այլ բնույթի գործոնները, համապատասխանաբար՝ 406.0 մլրդ դրամ, 48.4 մլրդ դրամ և 4.5 մլրդ դրամ:

Սույն բացատրագրի առանձին հարկատեսակների վերաբերյալ բաժիններում ներկայացված կանխատեսումների մեթոդաբանությունն ու համապատասխան ծրագրային ցուցանիշները վերաբերվում են ըստ նախորդ տարիների հավաքագրման և մակրոտնտեսական միջավայրի զարգացման միտումների ծրագրված՝ 2007 թվականի հարկային եկամուտների և պետական տուրքերի գծով 406.0 մլրդ դրամի չափով մուտքերի գնահատականներին, որոնք կատարվել են հարկային եկամուտների գծով ընթացիկ տարվա հունվար-սեպտեմբեր ամիսների, 2001-2006 թվականների տարեկան փաստացի մուտքերի և, ինչպես արդեն վերը նշվեց, մակրոտնտեսական շրջանակում կատարված առանձին մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումների հիման վրա:

Առանձին դեպքերում կքննարկվեն նաև տնտեսական այլ բնույթի գործոնների ազդեցությամբ ծրագրված գումարները:

1.1. ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿ

Ավելացված արժեքի հարկի (այսուհետ՝ ԱԱՀ) գծով 2007 թվականի բյուջետային մուտքերը կանխատեսվել են 158.3 մլրդ դրամի չափով, որը 30.1 մլրդ դրամով գերազանցում է 2005 թվականի փաստացի մուտքերը:

ԱԱՀ-ի գծով ՀՀ 2007 թվականի պետական բյուջեի նշված մուտքերը ներառում են հարկման ընդհանուր ռեժիմով գանձվող գումարները, ինչպես նաև ծխախոտի արտադրանքի հաստատագրված վճարների կազմում ընդգրկված ԱԱՀ-ի հաշվարկային գումարները: Ծխախոտի արտադրանքի հաստատագրված վճարները ծրագրվել և ներկայացվում են առանձին:

Ներքին շրջանառությունից հարկման ընդհանուր ռեժիմով գանձվող ԱԱՀ-ի գծով 2007 թվականի բյուջետային մուտքերը կանխատեսվել են մնացորդային եղանակով, որպես սպառումից և ապրանքների ներմուծումից գանձման ենթակա ԱԱՀ-ի գումարների տարբերություն:

Սպառումից գանձվելիք ԱԱՀ-ն գնահատելու համար դիտարկվել է ազգային հաշիվների համակարգի տնօրինվող եկամտի օգտագործման հաշվի «Վերջնական սպառման ծախսեր» հոդվածի փաստացի և մակրոտնտեսական զարգացումների շրջանակում կանխատեսված ցուցանիշները: Նախապես գնահատվել է հարկի փաստացի բազան[9]: Դրա համար վերջնական սպառման ծախսերը նվազեցվել են՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ տնտեսության որոշ ճյուղերում (գյուղատնտեսություն, շինարարություն, տրանսպորտ, առևտուր և հանրային սնունդ) ստեղծված ավելացված արժեքը ոչ լրիվ ծավալով է ենթակա ԱԱՀ-ով հարկման: Վերջնական սպառման ծախսերը նվազեցվել են նաև մակրոկանխատեսումների համաձայն 2007 թվականի համար ծրագրված զուտ անուղղակի հարկերի գումարի չափով: Հաջորդ նվազեցումը կատարվել է բենզինի, դիզվառելիքի և ծխախոտի սպառման հաշվարկային գումարի չափով, քանի որ առաջին երկու ապրանքատեսակների իրացումն ազատված է ԱԱՀ-ից, իսկ ծխախոտի համար սահմանված է հաստատագրված վճար: Բացի նշված նվազեցումներից, ԱԱՀ-ի հարկման բազան մեծացվել է ակցիզային հարկի և մաքսատուրքի կանխատեսումային գումարների չափով, քանի որ վերջիններս, համաձայն «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի, ներառվում են ԱԱՀ-ի հարկման բազայում:

2007 թվականին սպառումից գանձվելիք ԱԱՀ-ն հաշվարկվել է՝ գնահատված փաստացի բազայի նկատմամբ կիրառելով նախորդ տարվա փաստացի դրույքաչափը[10]:

Ներմուծումից հարկման ընդհանուր ռեժիմով գանձվող ԱԱՀ-ի գծով 2007 թվականի բյուջետային մուտքերը կանխատեսելիս դիտարկվել է ապրանքների ներմուծումը, որի հիման վրա գնահատվել է հարկի փաստացի բազան: Դրա համար 2007 թվականի ներմուծման ծավալը նվազեցվել է թանկարժեք

---

[9] Այսուհետ՝ «փաստացի բազա» հասկացությունն իրենից ներկայացնում է ՀՆԱ-ի (ներմուծման)՝ տվյալ հարկատեսակի համար հարկունակ մասը:

[10] Փաստացի կամ հաշվարկային մուտքերի հարաբերությունը փաստացի բազային:

ու կիսաթանկարժեք քարերի[11], հանքահումքային մթերքների[12], ներմուծվող ծխախոտի[13] կանխատեսումային մաքսային արժեքների հանրագումարի չափով: Դրա հետ մեկտեղ ներմուծումից գանձվող ԱԱՀ-ի հարկման բազան մեծացվել է ապրանքների ներմուծումից գանձվող մաքսատուրքի և ակցիզային հարկի կանխատեսումային գումարների չափով, քանի որ վերջիններս, համաձայն «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի, ներառվում են ԱԱՀ-ի հարկման բազայում:

Այսպիսով, վերը նշված մեթոդով հաշվարկված ԱԱՀ-ից 2007 թվականին հավաքագրման ենթակա բյուջետային մուտքերի գումարին ավելացնելով ծխախոտի համար գանձվող հաստատագրված վճարների կազմում ներառված ԱԱՀ-ի հաշվարկային գումարները, ստացվում են 2007 թվականի ծրագրային մուտքերը ԱԱՀ-ից:

Նշված (այսինքն՝ ըստ նախորդ տարիների հավաքագրման և մակրոտնտեսական միջավայրի զարգացման միտումների ծրագրված) մուտքերից բացի 2007 թվականի համար ԱԱՀ-ի գծով 2.1 մլրդ դրամի չափով մուտքեր են նախատեսվել նաև տնտեսական այլ բնույթի գործոնների հաշվին, մասնավորապես գազի սակագների բարձրացման արդյունքում, ինչպես նաև միջազգային պայմանագրերի համաձայն Համաշխարհային բանկից ստացվելիք արտաքին դրամական օժանդակության (վարկերի և պաշտոնական տրանսֆերտների) միջոցների օգտագործումից[14] ակնկալվող լրացուցիչ գումարների հաշվին:

1.2. ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐՆԵՐ՝ ծխախոտի արտադրանքի, ՀՀ ներմուծվող բենզինի և դիզվառելիքի համար

Ծխախոտի արտադրանքի և ՀՀ ներմուծվող բենզինի, դիզվառելիքի հաստատագրված վճարների 2007 թվականի համար ծրագրվել է 48.7 մլրդ դրամի չափով մուտքեր:

2007 թվականին ծխախոտի արտադրանքի համար հաստատագրված վճարների հաշվարկի համար նախապես գնահատվել են ՀՀ-ում արտադրվող/իրացվող ու ՀՀ ներմուծվող ծխախոտի միջին ամսական ծավալները՝ նախորդ տարիների և ընթացիկ տարվա հունվար-օգոստոս ամիսների փաստացի տվյալների հիման վրա: 2006 թվականի ֆիզիկական ծավալների համապատասխան սպասողական ցուցանիշների նկատմամբ կիրառելով 17 և ավելի տարիք ունեցող բնակչության թվաքանակի՝ վիճակագրական վերջին տվյալների հիման վրա հաշվարկված 2004 թվականի նկատմամբ 2005 թվականին գրանցված (տարեսկզբի դրությամբ) տարեկան աճը՝ 1.3%-ը, գնահատվել են 2007 թվականի համապատասխան ցուցանիշները:

ՀՀ ներմուծվող բենզինի և դիզվառելիքի համար հաստատագրված վճարներն, ինչպես և նախորդ դեպքում, գնահատվել են ըստ միջին ամսական ծավալների կանխատեսումների, որն իր հերթին կատարվել է որոշակի ենթադրությունների հիման վրա:

---

[11] Թանկարժեք ու կիսաթանկարժեք քարերի ապրանքախմբում մեծ տեսակարար կշիռ է կազմում վերամշակման և հետագայում արտահանման նպատակով ադամանդե քարերի ներմուծումը, որը ԱԱՀ-ով չի հարկվում:
[12] Հանքահումքային մթերքների հիմնական մասը ԱԱՀ-ով չի հարկվում:
[13] Հարկվում է հաստատագրված վճարով:
[14] Միջազգային պայմանագրերի համաձայն մի շարք վարկերի և պաշտոնական տրանսֆերտների միջոցների հաշվին ապրանքների և ծառայությունների ձեռքբերումը 2007 թվականի հունվարից հարկվելու է ԱԱՀ-ով:

Առաջին ենթադրությունը վերաբերվում է 2007 թվականին ՀՀ-ում գրանցված, շահագործվող այն տրանսպորտային միջոցների քանակին, որոնք օգտագործում են բենզին կամ դիզվառելիք: Հաջորդ ենթադրությունը վերաբերվում է 2006-2007թթ 1 մեքենայի վառելիքի օրական ծախսին: Նշված ենթադրությունների համար հիմք են հանդիսացել 2004-2006 թվականների փաստացի ցուցանիշները:

Ծխախոտի արտադրանքի և ՀՀ ներմուծվող բենզինի, դիզվառելիքի հաստատագրված վճարների հաշվարկային գումարները ՀՀ օրենսդրությամբ սահմանված համամասնություններով բաշխվել են ըստ առանձին հարկատեսակների՝ ԱԱՀ-ի, ակցիզային հարկի և մաքսատուրքի:

1.3. ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿ

Ակցիզային հարկի գծով 2007 թվականի բյուջետային մուտքերը գնահատվել են 54.8 մլրդ դրամի չափով, որը 5.3 մլրդ դրամով ավելի է 2005 թվականի փաստացի մուտքերից:

2007 թվականի կանխատեսվող գումարը ներառում է նաև ծխախոտի արտադրանքի և ՀՀ ներմուծվող բենզինի, դիզվառելիքի համար հաստատագրված վճարներում ներառված ակցիզային հարկի հաշվարկային գումարը:

Ինչպես և ԱԱՀ-ի դեպքում, հաշվարկները կատարվել են ըստ հարկման ընդհանուր ռեժիմով և հաստատագրված վճարների տեսքով գանձվող գումարների: Հարկման ընդհանուր ռեժիմով 2007 թվականին գանձվելիք ակցիզային հարկի գումարները կանխատեսվել են ներքին շրջանառությունից և ներմուծումից գանձվող հարկի համար առանձին:

Հարկման ընդհանուր ռեժիմով գանձվող 2007 թվականի տարեկան մուտքերը կանխատեսելիս հաշվի են առնվել 2007 թվականի սպառման և ապրանքների ներմուծման աճի իրական տեմպերը (6.2% և 13.5%) համապատասխանաբար ներքին շրջանառությունից և ներմուծումից գանձվող հարկի կանխատեսումներում, ինչպես նաև տվյալ հարկատեսակի գծով մուտքերի 2005-2006 թվականների հարկային սահմանության գործակիցները[15]:

1.4. ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿ

ՀՀ 2007 թվականի պետական բյուջեի մուտքերը շահութահարկի գծով կանխատեսվել են 72.6 մլրդ դրամի չափով, որը 26.0 մլրդ դրամով գերազանցում է 2005 թվականի փաստացի մուտքերը:

Շահութահարկից եկամուտների կանխատեսման նպատակով դիտարկվել են ազգային հաշիվների համակարգի եկամուտների ձևավորման հաշվի «Տնտեսության զուտ շահույթ և զուտ խառը եկամուտներ» (ըստ ճյուղերի) հոդվածի փաստացի և մակրոտնտեսական զարգացումների շրջանակում կանխատեսված ցուցանիշները, որոնց հիման վրա գնահատվել է շահութահարկի փաստացի բազան: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տնտեսության որոշ ճյուղերում (գյուղատնտեսություն, շինարարություն, տրանսպորտ, առևտուր և հանրային սնունդ) ստեղծված շահույթը ոչ լրիվ ծավալով է ենթակա շահութահարկով հարկման, տնտեսության զուտ շահույթը ճշգրտվել (նվազեցվել) է նշված ճյուղերի՝ շահութա-

[15] Սպառման/ներմուծման մեկ տոկոս աճին համապատասխանող ներքին շրջանառությունից/ներմուծումից գանձվող հարկի տոկոսային աճը:

հարկով չհարկվող զուտ շահույթի հաշվարկային գումարի չափով: Շահութահարկի գծով 2007 թվականի բյուջետային մուտքերը գնահատվել են 2006 թվականի փաստացի բազայի և դրույքաչափի հիման վրա (հաշվարկված ըստ 2005 թվականի փաստացի բազայի և 2006 թվականի սպասողական մուտքերի):

Նշված մուտքերից բացի 2007 թվականի համար շահութահարկի գծով 0.2 մլրդ դրամի չափով մուտքեր են նախատեսվել նաև տնտեսական այլ բնույթի գործոնների հաշվին, մասնավորապես միջազգային պայմանագրերի համաձայն Համաշխարհային բանկից ստացվելիք արտաքին դրամական օժանդակության (վարկերի և պաշտոնական տրանսֆերտների) միջոցների օգտագործումից ակնկալվող լրացուցիչ գումարների հաշվին:

1.5. ԵԿԱՄՏԱՀԱՐԿ

Եկամտահարկի գծով 2007 թվականի բյուջետային մուտքերը կանխատեսվել են 42.2 մլրդ դրամի չափով, որը համապատասխանաբար 15.6 մլրդ դրամով կգերազանցի 2005 թվականի փաստացի մուտքերը: Հաշվարկները կատարված են ըստ եկամտի ստացման հիմնական աղբյուրների:

Աշխատանքի վարձատրությունից և դրան հավասարեցված այլ վճարումներից եկամտահարկի կանխատեսումներում, ինչպես և շահութահարկի դեպքում, մակրոտնտեսական ցուցանիշների հիման վրա գնահատվել է հարկման փաստացի բազան: Դրա համար դիտարկվել է ՀՆԱ-ի կառուցվածքը, մասնավորապես՝ ազգային հաշիվների համակարգի եկամուտների ձևավորման հաշվի «Վարձու աշխատողների աշխատանքի վարձատրություն» հոդվածը: Հետագա հաշվարկներում այս ցուցանիշը նվազեցվել է տնտեսության մեջ զբաղվածների կանխատեսվող թվաքանակին համապատասխան չհարկվող նվազագույն աշխատավարձի (20000 դրամ) և վարձու աշխատողների կողմից վճարվող պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների (աշխատավարձի 3%-ը) հանրագումարի չափով:

Ֆիզիկական անձանց եկամտի այլ աղբյուրներից գանձվող (ձեռնարկատիրական գործունեություն, ավանդներ և այլն) եկամտահարկի հաշվարկները կատարված են փաստացի դրույքաչափի մեթոդի կիրառմամբ և հիմնված են ֆինանսական համակարգից, ձեռնարկատիրական գործունեությունից և այլ աղբյուրներից բնակչության դրամական եկամուտների վերաբերյալ վիճակագրական ցուցանիշի վրա:

2007 թվականի համար եկամտահարկի գծով ևս 2.1 մլրդ դրամի չափով մուտքեր են ակնկալվում տնտեսական այլ բնույթի գործոնների հաշվին, մասնավորապես բյուջետային ոլորտում 2007 թվականին աշխատավարձերի բարձրացման արդյունքում:

1.6. ՄԱՔՍԱՏՈՒՐՔ

2007 թվականի բյուջետային մուտքերը մաքսատուրքի գծով գնահատվել են 19.2 մլրդ դրամի չափով, որը 2.7 մլրդ դրամով գերազանցում է 2005 թվականի փաստացի մուտքերի մակարդակը:

2007 թվականի մաքսատուրքի կանխատեսվող գումարը ներառում է ՀՀ ներմուծվող ծխախոտի համար հաստատագրված վճարում ներառված մաքսատուրքի հաշվարկային գումարը:

Այս հարկատեսակի դեպքում ևս հաշվարկները կատարվել են հարկման ընդհանուր ռեժիմով և հաստատագրված վճարների տեսքով գանձվող գումարների համար առանձին: Հարկման ընդհանուր

ռեժիմով գանձվելիք գումարները կանխատեսվել են մաքսատուրքի փաստացի բազայի գնահատականի հիման վրա, որի առանձին տարրերի հաշվարկման մեթոդը ներկայացված է սույն բացատրագրի՝ ավելացված արժեքի հարկին վերաբերվող համապատասխան բաժնում:

1.7. ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐՆԵՐ՝ օրենքով սահմանված գործունեության առանձին տեսակների համար

Օրենքով սահմանված գործունեության առանձին տեսակների համար հաստատագրված վճարների գծով 2007 թվականին գանձվելիք գումարները ծրագրվել են 17.3 մլրդ դրամի չափով, որը 4.3 մլրդ դրամով գերազանցում է 2005 թվականի փաստացի մուտքերը:

2007 թվականի մուտքերը հաշվարկել են ըստ գործունեության առանձին տեսակների, հաշվի առնելով 2007 թվականին առևտրի և հանրային սննդի (9.0%), ծառայությունների ոլորտներում (4.4%) ակնկալվող տնտեսական աճի ցուցանիշները, ինչպես նաև տվյալ հարկատեսակի գծով մուտքերի 2006 թվականի հարկային սահունության գործակցի[16] կանխատեսումային մեծությունը:

1.8. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ, ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐ

ՀՀ 2007 թվականի պետական բյուջեի մուտքերը բնապահպանական և բնօգտագործման, ճանապարհային վճարների գծով կանխատեսվել են 10.2 մլրդ դրամի չափով՝ 2005 թվականի փաստացի տարեկան ցուցանիշներից 2.3 մլրդ դրամով ավելի:

2007 թվականի մուտքերը գնահատվել են ըստ վճարների առանձին տեսակների, հաշվի առնելով 2002-2006թթ փաստացի/սպասողական մուտքերը, ՀՆԱ-ի արդյունաբերության ճյուղի 2007 թվականին ակնկալվող տնտեսական աճի՝ 4.5%-ի (հարկային մարմինների կողմից գանձվող վճարների դեպքում) կամ ապրանքների ներմուծման աճի՝ 13.5%-ի (մաքսային մարմինների կողմից գանձվող վճարների դեպքում) տեմպերը, ինչպես նաև այս հարկատեսակների գծով 2005 թվականի մուտքերի հարկային սահունության գործակիցը[17]:

Հաշվարկներում հաշվի է առնվել նաև ՀՀ կառավարության և Վրաստանի կառավարության միջև կնքված, ս. թ. 2-րդ կիսամյակից կիրառվող համաձայնագրի գործողության ազդեցությունը ՀՀ սահմանին գանձվող բնապահպանական և ճանապարհային վճարների գծով բյուջետային մուտքերի մակարդակի վրա:

1.9. ՊԱՐԶԵՑՎԱԾ ՀԱՐԿ

Պարզեցված հարկի գծով 2007 թվականի բյուջետային մուտքերը գնահատվել են 8.7 մլրդ դրամի չափով՝ 2005 թվականի փաստացի տարեկան ցուցանիշից 1.9 մլրդ դրամով ավելի:

Պարզեցված հարկի գծով 2007 թվականի մուտքերի կանխատեսումները կատարված են ըստ օրենքով սահմանված գործունեության 2 հիմնական՝ առևտրի և այլ ոլորտների, հաշվի առնելով 2007

---

[16] ՀՆԱ-ի տվյալ ճյուղի 1 տոկոս աճին համապատասխանող հարկի (համապատասխան ոլորտից) տոկոսային աճը:
[17] Տնտեսական աճի/ ներմուծման մեկ տոկոս աճին համապատասխանող հարկի տոկոսային աճը:

թվականին առևտրի և հանրային սննդի (12.8%) ոլորտի, ՀՆԱ-ի անվանական աճի (13.4%) ցուցանիշները (համապատասխանաբար առևտրի և այլ ոլորտների համար), ինչպես նաև տվյալ հարկատեսակի գծով 2006 թվականի մուտքերի հարկային սահմանության գործակիցը[18]:

1.10. ԱՅԼ ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Այլ հարկային եկամուտների գծով 2007 թվականին գանձվելիք գումարները ծրագրվել են 3.3 մլրդ դրամի չափով, որը 2005 թվականի փաստացի տարեկան ցուցանիշից ավել է 1.7 մլրդ դրամով:

1.11. ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐ

ՀՀ 2007 թվականի պետական բյուջեի նախագծով հարկային եկամուտների կազմում ընդգրկված հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների գծով նախատեսվում է 0.4 մլրդ դրամի չափով գումարների ստացում:

1.12. ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ

Պետական տուրքերից 2007 թվականի բյուջետային մուտքերը Նախագծով ծրագրվել են 19.1 մլրդ դրամի չափով՝ 2006 թվականի համար հաստատված 18.4 մլրդ դրամի, սպասողական 18.5 մլրդ դրամի[19] և 2005 թվականին փաստացի ստացված 16.9 մլրդ դրամի[20] դիմաց (համապատասխանաբար 0.7 մլրդ դրամով, 0.6 մլրդ դրամով և 2.2 մլրդ դրամով ավելի):

Պետական տուրքերի գծով 2007 թվականի բյուջետային մուտքերի կանխատեսումները կատարվել են ըստ 1998-2006 թվականների փաստացի հավաքագրումների միտումների՝ հաշվի առնելով ՀՀ օրենսդրության մեջ կատարված առանձին փոփոխություններն ու լրացումները, ինչպես նաև պետական տուրքի յուրաքանչյուր տեսակի առանձնահատկությունները: Պետական տուրքի առանձին տեսակների գծով 2007 թվականի բյուջետային մուտքերի կանխատեսումները, հաշվարկման մեթոդների համառոտ

---

[18] Առևտրի և հանրային սննդի ոլորտի/ ՀՆԱ-ի անվանական մեկ տոկոս աճին համապատասխանող հարկի տոկոսային աճը (համապատասխանաբար առևտրական և այլ ոլորտների համար):

[19] 2006 թվականի սպասողականը չի պարունակում պետական տուրքի առանձին տեսակների գծով ընթացիկ տարում պետական բյուջեից ֆինանսավորված բյուջետային մուտքերը («ՀՀ 2006 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն):

[20] Տվյալների համադրելիությունն ապահովելու նպատակով 2005 թվականի փաստացիում ներառված չեն «ՀՀ 2005 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն ՀՀ 2005 թվականի պետական բյուջեից 380.3 մլն դրամի չափով ֆինանսավորված հետևյալ բյուջետային մուտքերը՝

- ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից հայցադիմումներ, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս վճարվող պետական տուրք՝ 380.2 մլն դրամ:
- «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքին համապատասխան ոչ կառավարչական բնույթի գործունեություն իրականացնող պետական հիմնարկների պետական ոչ առևտրային կազմակերպությունների վերակազմակերպման նպատակով ՀՀ ձեռնարկությունների պետական ռեգիստրում գրանցման և կնիքների պատրաստման թույլտվության համար վճարվող պետական տուրքեր՝ 67.0 հազ. դրամ:
- Սոցիալական ապահովության մարմիններից արտոնյալ պայմաններով ավտոմեքենաներ ստացած հաշմանդամներին վարորդական իրավունքի վկայական և ավտոմեքենայի պետհամարանիշ տալու, ինչպես նաև ավտոմեքենայի գրանցման և վերագրանցման համար պետական բյուջեից իրականացվող պետական տուրքի վճարումները՝ 79.5 հազ. դրամի չափով:

նկարագրությունը, ինչպես նաև ծրագրային, սպասողական և փաստացի ցուցանիշների համեմատականները ներկայացվում են ստորև:

1. Դատարան տրվող հայցադիմումների, դիմումների ու գանգատների, դատարանների վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանների կողմից փաստաթղթերի պատճեններ տալու համար գանձվող պետական տուրքերի գծով 2007 թվականի մուտքերը գնահատվել են 2006 թվականի սպասողականի չափով՝ 415.6 մլն դրամ, որը համապատասխանաբար 110.8 մլն դրամով, և 47.1 մլն դրամով պակաս է 2006 թվականի համար հաստատված և 2005 թվականի փաստացի մակարդակներից:

2007 թվականի մուտքերը գնահատվել են ըստ 2006 թվականի առաջին 7 ամիսների փաստացի մուտքերի, 2001-2005 թվականների առաջին 7 ամիսների մուտքերի՝ տարեկան համապատասխան գումարում ունեցած տեսակարար կշիռների միջինացված ցուցանիշների:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու և Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը փոխելու համար գանձվող պետական տուրքի գծով 2007 թվականի մուտքերը կանխատեսվել են 2006 թվականի սպասողականի չափով՝ 12.2 մլն դրամ, 2006 թվականի համար հաստատված 13.9 մլն դրամի և 2005 թվականին փաստացի ստացված 7.5 մլն դրամի դիմաց, ելնելով պետական տուրքի այս տեսակի գծով 2006 թվականի առաջին 7 ամիսների և 2005 թվականի վերջին 5 ամիսների փաստացի մուտքերի ցուցանիշներից:

3. Հյուպատոսական ծառայությունների կամ գործողությունների համար գանձվող պետական տուրքերի գծով 2007 թվականի մուտքերը կանխատեսվել են 2,025.5 մլն դրամի չափով՝ 2006 թվականի համար հաստատված 1,486.0 մլն դրամի, 2006 թվականի սպասողական 1,991.3 մլն դրամի և 2005 թվականի փաստացի ստացված 1,466.2 մլն դրամի դիմաց: Կանխատեսումներում հիմք է ընդունվել պետական տուրքի այս տեսակի գծով 2006 թվականի առաջին 7 ամիսների փաստացի մուտքերը, 2000-2005 թվականների առաջին 7 ամիսների մուտքերի՝ տարեկան համապատասխան գումարում ունեցած տեսակարար կշիռների միջինացված ցուցանիշները, ինչպես նաև ՀՀ արտաքին գործերի նախարարության կողմից տրամադրված տեղեկությունները:

4. Պետական գրանցման համար գանձվող պետական տուրքերի գծով 2007 թվականի մուտքերը կանխատեսվել են 4,014.0 մլն դրամի չափով, որը համապատասխանաբար 449.6 մլն դրամով, 311.7 մլն դրամով և 705.0 մլն դրամով ավելի է 2006 թվականի համար հաստատված և սպասողական, 2005 թվականին փաստացի ստացված ցուցանիշներից:

Պետական գրանցման համար գանձվող պետական տուրքերի գերակշռող մասը՝ 3,974.3 մլն դրամը կամ 99.0 %-ը 2007 թվականին ապահովվելու է պետական տուրքի հետևյալ 6 խմբերի հաշվին՝

- տրանսպորտային միջոցների, գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաների տարեկան տեխնիկական զննությունն անցնելու վերաբերյալ համապատասխան փաստաթուղթ տալու համար գանձվող պետական տուրքերի գծով 1,575.5 մլն դրամի չափով (պետական գրանցումից 2007 թվականի պետական տուրքերի կանխատեսվող մուտքերի ամբողջ ծավալի 39.2%-ը) մուտքերը 2006 թվականի համար հաստատված և սպասողական, 2005 թվականին փաստացի ստացված ցուցանիշներից ավելի են կանխատեսվել համապատասխանաբար 114.5 մլն դրամով, 114.4 մլն

դրամով և 231.5 մլն դրամով: Հաշվարկների հիմքում դրվել է տեխնիկական զննություն անցած և ՀՀ ներմուծված մեքենաների քանակների վերաբերյալ 2005 թվականի փաստացի և ընթացիկ տարվա կանխատեսումային ցուցանիշները:

- ավտոմեքենայի պետական համարանիշ տալու և կորցրածը վերականգնելու, գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաների գրանցման և պետական համարանիշ տալու և կորցրածը վերականգնելու համար գանձվող պետական տուրքերի գծով 2007 թվականի մուտքերը ծրագրվել են 771.9 մլն դրամի (պետական գրանցումից 2007 թվականի պետական տուրքերի կանխատեսվող մուտքերի ամբողջ ծավալի 19.2%-ը) չափով, որը 2006 թվականի հաստատված և սպասողական, 2005 թվականին փաստացի ստացված ցուցանիշները գերազանցում է համապատասխանաբար 191.0 մլն դրամով, 88.6 մլն դրամով և 207.7 մլն դրամով:

Պետական տուրքի այս տեսակի գծով 2007 թվականի մուտքերը ծրագրվել են, ելնելով 2006 թվականի առաջին 7 ամիսների փաստացի մուտքերից, 2003-2005 թվականների առաջին 7 ամիսների մուտքերի՝ տարեկան համապատասխան գումարում ունեցած տեսակարար կշիռների միջինացված ցուցանիշներից և ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության կողմից ներկայացված տեղեկություններից:

- ավտոմեքենայի (մոտոցիկլետի) տեխնիկական անձնագիր (գրանցման վկայական) և կորցրած տեխնիկական անձնագրի (գրանցման վկայականի) կրկնօրինակ տալու համար գանձվող պետական տուրքի գծով 2007 թվականի մուտքերը ծրագրվել են 352.5 մլն դրամի (պետական գրանցումից 2007 թվականի պետական տուրքերի կանխատեսվող մուտքերի ամբողջ ծավալի 8.8 %-ը) չափով՝ 2006 թվականի հաստատված և սպասողական, 2005 թվականի փաստացի ստացված 288.9 մլն դրամի, 320.0 մլն դրամի և 262.9 մլն դրամի դիմաց:

Պետական տուրքի այս տեսակի գծով 2007 թվականի մուտքերը ծրագրվել են, հաշվի առնելով 2006 թվականի առաջին 7 ամիսների փաստացի մուտքերը, 2003-2005 թվականների առաջին 7 ամիսների մուտքերի՝ տարեկան համապատասխան գումարում ունեցած տեսակարար կշիռների և 1999-2006 թվականների տարեկան աճի տեմպերի միջինացված ցուցանիշները:

- ավտոմեքենաները, գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաները, ջրային փոխադրամիջոցները վերագրանցելու (ավտոմեքենաների դեպքում՝ նաև գրանցելու), հաշվառումից հանելու, ինչպես նաև դրանց գրանցման տվյալների փոփոխության հետ կապված որևէ գործողություն կատարելու համար գանձվող պետական տուրքերի գծով 2007 թվականի 150.9 մլն դրամի (պետական գրանցումից 2007 թվականի պետական տուրքերի կանխատեսվող մուտքերի ամբողջ ծավալի 3.8 %-ը) չափով կանխատեսված մուտքերը 2006 թվականի համար հաստատված և 2006 թվականի սպասողական, 2005 թվականին փաստացի ստացված ցուցանիշները գերազանցում են համապատասխանաբար 27.1 մլն դրամով, 13.8 մլն դրամով և 37.5 մլն դրամով:

Պետական տուրքի այս տեսակի գծով 2007 թվականի մուտքերը ծրագրվել են, ելնելով 2006 թվականի առաջին 7 ամիսների փաստացի մուտքերի ցուցանիշից, 2003-2006 թվականների առաջին 7 ամիսների մուտքերի՝ տարեկան համապատասխան գումարում ունեցած տեսակարար կշիռների միջինացված ցուցանիշից և ավտոմեքենայի տեխնիկական անձնագրի գծով պե-

տական տուրքերի կանխատեսումներում 2007 թվականի համար կիրառված տարեկան աճի տեմպից:

- գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում կատարելու համար գանձվող պետական տուրքերի գծով 2007 թվականի մուտքերը կանխատեսվել են 1,003.5 մլն դրամի չափով (պետական գրանցումից 2007 թվականի պետական տուրքերի կանխատեսվող մուտքերի ամբողջ ծավալի 25.0 %-ը), 2006 թվականի համար հաստատված և 2006 թվականի սպասողական, 2005 թվականին փաստացի ստացված 950.7 մլն դրամի, 946.8 մլն դրամի և 878.2 մլն դրամի դիմաց:

  Պետական տուրքի այս տեսակի գծով 2007 թվականի մուտքերը գնահատվել են, հաշվի առնելով 2006 թվականի առաջին 7 ամիսների փաստացի մուտքերը, 2005 թվականի տարեկան մուտքերում առաջին 7 ամիսների մուտքերի տեսակարար կշռի, ինչպես նաև 2004-2006 թվականների տարեկան աճի տեմպերի միջինացված ցուցանիշները:

- ՀՀ պետական ռեգիստրում գրանցման ենթակա տնտեսվարող սուբյեկտներից գանձվող պետական տուրքերի գծով 2007 թվականի մուտքերը ծրագրվել են 120.1 մլն դրամի (պետական գրանցումից 2007 թվականի պետական տուրքերի կանխատեսվող մուտքերի ամբողջ ծավալի 3.0 %-ը) չափով՝ 2006 թվականի հաստատված ցուցանիշի մակարդակով, որը 2006 թվականի սպասողական և 2005 թվականի փաստացի ցուցանիշներից ավելի է 5.2 մլն դրամով և 9.2 մլն դրամով:

  Պետական տուրքի այս տեսակի գծով 2007 թվականի մուտքերը կանխատեսվել են, հաշվի առնելով 2006 թվականի առաջին 7 ամիսների փաստացի մուտքերը, 2004-2005 թվականների տարեկան մուտքերում առաջին 7 ամիսների մուտքերի տեսակարար կշիռների, ինչպես նաև 2002-2006 թվականների տարեկան աճի տեմպերի միջինացված ցուցանիշները:

5. Մշակութային արժեքների արտահանման կամ ժամանակավոր արտահանման իրավունքի վկայագիր տալու համար գանձվող պետական տուրքերի գծով 2007 թվականի մուտքերը 2006 թվականի համար հաստատված 1.3 մլն դրամի, 2006 թվականի սպասողական 1.6 մլն դրամի և 2005 թվականին փաստացի ստացված 1.7 մլն դրամի դիմաց ծրագրվել են 1.9 մլն դրամի չափով: Կանխատեսումներում հաշվի են առնվել 2006 թվականի առաջին 7 ամիսների փաստացի մուտքերը, 2003-2004 թվականների տարեկան մուտքերում առաջին 7 ամիսների մուտքերի տեսակարար կշիռների, ինչպես նաև ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից տրամադրված տեղեկությունները:

6. Գյուտերի, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների, ֆիրմային անվանումների, ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների իրավական պաշտպանության հետ կապված իրավաբանական նշանակություն ունեցող գործողությունների համար գանձվող պետական տուրքերի գծով 2007 թվականի մուտքերը կանխատեսվել են 303.0 մլն դրամի չափով, որը 74.0 մլն դրամով, 350.6 մլն դրամով և 57.6 մլն դրամով պակաս է համապատասխանաբար 2006 թվականի հաստատված և 2006 թվականի սպասողական, 2005 թվականի փաստացի մուտքերից:

Պետական տուրքերի այս խմբից 2007 թվականի մուտքերը գնահատվել են, հաշվի առնելով 2006 թվականի առաջին 7 ամիսների փաստացի մուտքերը, 2002-2005 թվականների առաջին 7 ամիսների

մուտքերի՝ տարեկան համապատասխան գումարում ունեցած տեսակարար կշիռները, ինչպես նաև ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության կողմից տրամադրված տեղեկությունները:

7. Ֆիզիկական անձանց տրվող իրավաբանական նշանակություն ունեցող փաստաթղթերի, որոշակի ծառայությունների կամ գործողությունների համար գանձվող պետական տուրքերի գծով 2007 թվականի մուտքերը կանխատեսվել են 2,814.0 մլն դրամի չափով կամ 2006 թվականի համար հաստատված և սպասողական, 2005 թվականին փաստացի ստացված մուտքերից համապատասխանաբար 363.0 մլն դրամով, 320.7 մլն դրամով և 655.4 մլն դրամով ավելի:

Կանխատեսումներն իրականացվել են, հաշվի առնելով 2006 թվականի առաջին 7 ամիսների փաստացի մուտքերը, 2001-2005 թվականների տարեկան փաստացի մուտքերում համապատասխան առաջին 7 ամիսների տեսակարար կշիռների և 2003-2006թթ տարեկան աճի տեմպերի միջինացված ցուցանիշները:

8. Լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու համար գանձվող պետական տուրքերի գծով 2007 թվականի մուտքերը կանխատեսվել են 2,856.2 մլն դրամի չափով, որը 2006 թվականի սպասողական մուտքերը գերազանցում է 100.0 մլն դրամով, իսկ 2006 թվականի համար հաստատված և 2005 թվականին փաստացի ստացված մուտքերից պակաս է համապատասխանաբար 166.3 մլն դրամով և 77.8 մլն դրամով: Պետական տուրքերի այս խմբից 2007 թվականի մուտքերի գերակշիռ մասը՝ 2,395.4 մլն դրամը կամ 83.9 %-ը նախատեսվում է ապահովել էներգետիկայի, շահումով խաղերի և վիճակախաղերի, առողջապահության, պետական սեփականություն հանդիսացող ընդերքի և բնական ռեսուրսների օգտագործման, քաղաքաշինության բնագավառներում և սննդամթերքի արտադրության համար տնտեսվարող սուբյեկտների կողմից լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու համար վճարվելիք պետական տուրքերի գումարների հաշվին: Կանխատեսումներն իրականացվել են, ելնելով օրենքով նախատեսված լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների վերաբերյալ համապատասխան պետական կառավարման մարմինների կողմից տրամադրված անհրաժեշտ քանակական տվյալներից, 2005 թվականի փաստացի և 2006 թվականի սպասողական մուտքերից:

9. Այլ ծառայությունների կամ գործողությունների համար գանձվող պետական տուրքերի գծով 2007 թվականի մուտքերը կանխատեսվել են 6,670.1 մլն դրամի չափով, որը 193.0 մլն դրամով և 527.7 մլն դրամով գերազանցում է 2006 թվականի սպասողական և 2005 թվականի փաստացի մակարդակները, իսկ 2006 թվականի հաստատված մուտքերից պակաս է 346.2 մլն դրամով:

Նշված պետական տուրքերից 2007 թվականի բյուջետային մուտքերի գերակշռող մասը՝ 6,342.8 մլն դրամը (95.1 %), ապահովվելու է պետական տուրքի հետևյալ 3 տեսակների հաշվին՝

- ՀՀ-ից օդային տրանսպորտի միջոցներով ֆիզիկական անձանց (օդային ուղևորների) ելքի համար գանձվող պետական տուրքի գծով 2007 թվականի մուտքերը կանխատեսվել են 5,667.0 մլն դրամի (այլ ծառայությունների կամ գործողությունների համար գանձվող պետական տուրքերի գծով 2007 թվականի կանխատեսվող մուտքերի ամբողջ ծավալի 85.0 %-ը) չափով, որը 2006 թվականի հաստատված ցուցանիշից պակաս է 312.8 մլն դրամով, իսկ 2006 թվականի սպասողական և 2005 թվականին փաստացի ստացված ցուցանիշները գերազանցում է համապատասխանաբար 241.8 մլն դրամով և 495.1 մլն դրամով:

Պետական տուրքի այս տեսակի գծով 2007 թվականի մուտքերը գնահատվել են, հաշվի առնելով 2006 թվականի առաջին 7 ամիսների փաստացի մուտքերը, 2000-2005 թվականների տարեկան մուտքերում առաջին 7 ամիսների մուտքերի տեսակարար կշիռների միջինացված ցուցանիշը, ինչպես նաև 2005-2006թթ տարեկան աճի տեմպերի միջինացված ցուցանիշները:

- վարորդական իրավունքի, գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաների և օդային փոխադրամիջոցների վարման իրավունքի վկայական և կորցրած վկայականի կրկնօրինակը տալու համար գանձվող պետական տուրքերի գծով 2007 թվականի մուտքերը կանխատեսվել են 447.9 մլն դրամի (այլ ծառայությունների կամ գործողությունների համար գանձվող պետական տուրքերի գծով 2007 թվականի կանխատեսվող մուտքերի ամբողջ ծավալի 6.7 %-ը) չափով՝ 2006 թվականի համար հաստատված, 2006 թվականի սպասողական և 2005 թվականին փաստացի ստացված 433.5 մլն դրամի, 448.4 մլն դրամի և 390.0 մլն դրամի դիմաց:

  Պետական տուրքի այս տեսակի գծով 2007 թվականի մուտքերը գնահատվել են, հաշվի առնելով 2006 թվականի առաջին 7 ամիսների փաստացի մուտքերը, 2003-2005 թվականների տարեկան մուտքերում առաջին 7 ամիսների մուտքերի տեսակարար կշիռների միջինացված ցուցանիշները:

- պետական մենաշնորհային բնույթի ծառայությունների (գործողությունների) մատուցումը հաստատող փաստաթղթի (վկայականի) տրամադրման համար յուրաքանչյուր քննությունն ընդունելու համար (բացառությամբ բժշկական, դեղագործական և արտոնագրային հավատարմատարների որակավորման համար քննությունների) գանձվող պետական տուրքի գծով 2007 թվականի մուտքերը կանխատեսվել են 227.9 մլն դրամի (այլ ծառայությունների կամ գործողությունների համար գանձվող պետական տուրքերի գծով 2007 թվականի կանխատեսվող մուտքերի ամբողջ ծավալի 3.4 %-ը) չափով՝ 2006 թվականի համար հաստատված, 2006 թվականի սպասողական և 2005թ փաստացի ստացված 236.8 մլն դրամ, 227.2 մլն դրամի և 217.6 մլն դրամի դիմաց:

Պետական տուրքի այս տեսակի գծով 2007 թվականի մուտքերը գնահատվել են, հաշվի առնելով 2006թ առաջին 7 ամիսների և 2005 թվականի վերջին 5 ամիսների փաստացի մուտքերի ցուցանիշները:

2. ՈՉ ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Նախագծով ոչ հարկային եկամուտների գծով մուտքերը 2007 թվականի համար ծրագրվել են 11.4 մլրդ դրամի չափով՝ 2006 թվականի հաստատված 8.1 մլրդ դրամի[21], սպասողական 21.9 մլրդ դրամի և 2005 թվականին փաստացի ստացված 21,5 մլրդ դրամի[22] դիմաց: 2007 թվականի համար ծրագրված մուտքերի նման կտրուկ նվազումը (10.1 մլրդ դրամ) ընթացիկ տարվա սպասողական ցուցանիշների

[21] «ՀՀ 2006 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով ոչ հարկային եկամուտների գծով հաստատված մուտքերից բացի ներառված է նաև նույն օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ մասով ՀՀ կառավարությանը վերապահված իրավասությունների շրջանակներում 01.10.06թ դրությամբ կատարված 0.9 մլրդ դրամի չափով ավելացումները:

[22] Առանց ՀՀ պետական կառավարման մարմինների 2005 թվականի արտաբյուջետային միջոցների եկամուտների, ընդամենը՝ 6.7 մլրդ դրամ և ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչման դեպքում օրենքի համապատասխան կատարվող վճարումների, ընդամենը՝ 1,1 մլրդ դրամ:

նկատմամբ հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ 2006 թվականի սպասողական մուտքերում ներառված է «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ից ստացված պարգևավճարը՝ 8.4 մլրդ դրամի չափով:

ՄԺԾԾ-ով ոչ հարկային եկամուտների գծով 2007 թվականի համար նախատեսվել է 7.1 մլրդ դրամ: ՄԺԾԾ-ի շրջանակներում կատարվածի նկատմամբ Նախագծի կանխատեսումները կրել են ինչպես գումարային, այնպես էլ կառուցվածքային փոփոխություններ: Բացի այդ, 2007 թվականի համար կանխատեսվող 1 ԱՄՆ դոլարի միջին տարեկան դրամային փոխարժեքը ՄԺԾԾ-ում կիրառված 450 դրամի դիմաց Նախագծում նվազել է մինչև 357 դրամ, որի հետևանքով Նախագծով նախատեսվող ոչ հարկային եկամուտները ՄԺԾԾ-ի համեմատությամբ նվազել են 449.0 մլն դրամի չափով: Չնայած դրան, ոչ հարկային եկամուտները ՄԺԾԾ-ի շրջանակներում ծրագրվածի նկատմամբ նախատեսվել են 4.3 մլրդ դրամի չափով ավելի, որից 3.2 մլրդ դրամը կազմում են հանքարդյունահանման լիցենզառուների և հանքարդյունահանման հատուկ լիցենզառուների կողմից վճարվելիք ռոյալթիները, որոնց գծով ՄԺԾԾ-ով գումար չէր նախատեսված: Նշված տարբերության համար հիմք են հանդիսացել նաև ոչ հարկային եկամուտների կազմում ներառված առանձին եկամտատեսակների գծով ընթացիկ տարվա հունիս-օգոստոս ամիսներին հավաքագրված մուտքերի բարձր աճի տեմպերը:

Ոչ հարկային եկամուտների կազմում հաշվառվող առանձին եկամտատեսակների գծով 2007 թվականին վճարման ենթակա գումարները ծրագրվել են՝ հաշվի առնելով դրանց առանձնահատկությունները, ինչպես նաև նախորդ տարիների մուտքերի հավաքագրման միտումները: Ստորև ներկայացվում են 2007 թվականի ոչ հարկային եկամուտների գծով կանխատեսվող բյուջետային մուտքերի՝ 2006 թվականի հաստատված և սպասողական, 2005 թվականի փաստացի մուտքերի նկատմամբ համեմատականը, ինչպես նաև կատարված հաշվարկներում կիրառված մեթոդաբանության համառոտ նկարագրությունը:

1. Պետական հիմնարկների հաշվեկշիռներում հաշվառվող գույքի, համայնքների վարչական տարածքներից դուրս գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձակալության և օգտագործման դիմաց գանձվող վարձավճարները 2007 թվականի համար կանխատեսվում են շուրջ 399.6 մլն դրամի չափով, որից՝

1.1 պետական ձեռնարկությունների և գույքի (բացառությամբ հողի) վարձակալության վարձավճարների գծով՝ 319.0 մլն դրամ, 2006 թվականի հաստատված[23] 168.6 մլն դրամի, սպասողական 346.7 մլն դրամի և 2005 թվականին փաստացի ստացված 210.7 մլն դրամի դիմաց: Կանխատեսումներում հիմք են ընդունվել պետական կառավարման մարմինների կողմից ներկայացված տեղեկությունները 2006, 2007 թվականներին վարձակալության տրված (տրվելիք) տարածքների մակերեսների և վարձակալական պայմանագրերի համաձայն վճարվելիք վարձավճարների վերաբերյալ, ինչպես նաև համապատասխան բյուջետային մուտքերի գծով գանձապետական տվյալները: 2006 թվականի տարեկան

[23] Այստեղ և այսուհետ ոչ հարկային եկամուտների որևէ տեսակի գծով որպես հաստատված ցուցանիշ ներկայացվել է ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 15-ի «ՀՀ 2006 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2162-Ն որոշմամբ հաստատված համապատասխան ցուցանիշը:

սպասողական ցուցանիշի նկատմամբ 2007 թվականին ակնկալվող վարձավճարների նվազումը հիմնականում պայմանավորված է պետական սեփականություն համարվող շենքերի և շինությունների օտարմամբ, ինչպես նաև պետական ոչ առևտրային կազմակերպություններին ամրագրված գույքի վարձակալության պայմանագրերի վերակնքմամբ, որի արդյունքում վարձավճարները դառնում են տվյալ կազմակերպության սեփական եկամուտները:

1.2 համայնքների վարչական տարածքներից դուրս գտնվող պետական պահուստի ֆոնդի հողերի վարձակալության և օգտագործման դիմաց վճարվող վարձավճարները ծրագրվել են 80.6 մլն դրամի չափով՝ 2006 թվականի հաստատված 70.3 մլն դրամի, սպասողական 74.1 մլն դրամի և 2005 թվականին փաստացի ստացված 57.7 մլն դրամի դիմաց: Կանխատեսումներում հաշվի են առնվել 2005-2007 թվականներին վարձակալության տրված (տրվելիք) հողատարածքների մակերեսների, վճարված վարձավճարների վերաբերյալ (ըստ առանձին հողատեսքերի՝ վարելահող, արոտավայր, խոտհարք և այլ հողատեսքեր) ՀՀ մարզպետարանների կողմից ներկայացված տեղեկությունները, ինչպես նաև համապատասխան գանձապետական տվյալները:

2. Բանկերում և ֆինանսավարկային հաստատություններում պետական բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարների, իրավաբանական անձանց կապիտալում կատարված ներդրումներից ստացվող շահաբաժիններից 2007 թվականին ակնկալվում են 367.0 մլն դրամի չափով մուտքեր, որոնք ծրագրվել են միայն վերջինիս գծով՝ 367.0 մլն դրամի չափով, 2006 թվականի համար այս եկամտատեսակի գծով ծրագրված 360.0 մլն դրամի, սպասողական 380.0 մլն դրամի և 2005 թվականին փաստացի ստացված 369.6 մլն դրամի դիմաց: Շահաբաժինների գծով 2007 թվականի կանխատեսվող մուտքերը ծրագրելիս հաշվի են առնվել հետևյալ գործոնները.

ա) ՀՀ կառավարության 2001 թվականի դեկտեմբերի 5-ի «Պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող ընկերություններում շահաբաժինների Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման գործընթացում պետական բաժնեմասը տնօրինող մարմինների աշխատանքը կազմակերպելու մասին» N 1194 որոշմամբ պետական մասնակցության դիմաց պետական բյուջե կատարվելիք շահույթից մասհանումների 20%-ի չափով սահմանումը և մինչև 3 մլն դրամ զուտ շահույթ ապահոված 50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ ընկերությունների ազատումը ՀՀ պետական բյուջե շահաբաժին վճարելուց,

բ) մասնավորեցված ընկերությունների կողմից ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով ամրագրված շահաբաժինների գծով առկա պարտքերի մարման հնարավորությունը:

3. Պետության կողմից տրված վարկերի օգտագործման դիմաց տոկոսավճարները 2007 թվականին կանխատեսվում են 474.1 մլն դրամի չափով: Մասնավորապես.

3.1 ՀՀ ռեզիդենտներին տրամադրված վարկերի օգտագործումից ակնկալվում է ստանալ 282.7 մլն դրամ: Ծրագրային մուտքերի բաշխվածքն ըստ առանձին վարկային ծրագրերի հետևյալն է.

ա) Համաշխարհային Բանկի օժանդակությամբ իրականացվող Գյուղատնտեսական բարեփոխումների աջակցության ծրագրով ՀՀ բանկերին (Արդշինինվեստբանկ, Հայգյուղփոխբանկ, Կոնվերս բանկ) առ 01.01.2006թ. տրամադրվել է 3,650.0 հազ ԱՄՆ դոլարի չափով վարկ, (տարեկան 6.5%, LIBOR

և LIBOR+1 տոկոսադրույքներով), որի օգտագործման դիմաց 2007 թվականի պետական բյուջե կմուտքագրվի շուրջ 232.4 հազար ԱՄՆ դոլար կամ 83.0 մլն դրամ (1 ԱՄՆ դոլար= 357 դրամ) տոկոսավճար:

բ) «Հյուսիս-արևմտյան շրջանների գյուղատնտեսական ծառայությունների ծրագրի» շրջանակներում (համաձայն 1998 թվականի հունվարի 13-ին ՀՀ կառավարության և Հայգյուղփոխբանկի միջև կնքված «Սուբսիդավորմամբ ֆինանսավորման պայմանագրի» Հոդված 2.02-ի) Հայգյուղփոխբանկին առ 01.01.2006 թվականը տրամադրվել է 1,689.9 հազար ԱՄՆ դոլարի չափով նպատակային վարկ: Դրա դիմաց տարեկան 5.99% տոկոսադրույքով հաշվարկվել է 101.2 հազար ԱՄՆ դոլարի կամ շուրջ 36.1 մլն դրամի չափով տոկոսավճար:

գ) Համաշխարհային Բանկի աջակցությամբ իրականացվող Գյուղատնտեսական ծառայությունների վարկային ծրագրի շրջանակներում (համաձայն 2002 թվականի հունվարի 11-ին ՀՀ կառավարության և Հայգյուղփոխբանկի, «Շեն» բարեգործական հասարակական կազմակերպության «Անիվ» հիմնադրամի միջև կնքված «Սուբսիդավորմամբ ֆինանսավորման պայմանագրի») առ 01.01.2006 թվականը Հայգյուղփոխբանկին տրամադրվել է 2,828.0 հազար ԱՄՆ դոլար վարկ՝ տարեկան 5.99% տոկոսադրույքով և «Շեն» բարեգործական հասարակական կազմակերպության «Անիվ» հիմնադրամին՝ 1,000.0 հազար ԱՄՆ դոլար, տարեկան 1% տոկոսադրույքով: Նշված վարկերի գումարներով և տոկոսադրույքներով հաշվարկվել է 179.4 հազար ԱՄՆ դոլարի կամ շուրջ 64.0 մլն դրամի չափով տոկոսավճար:

դ) Ձեռնարկությունների զարգացման ծրագրի շրջանակներում ՀՀ բանկերին (Արդշինինվեստբանկ, Հայներարտբանկ, Անելիք բանկ, Կոնվերս բանկ, Հայէկոնոմբանկ, Ինեկոբանկ) տրամադրված նպատակային վարկերի ընդհանուր գումարը կազմում է շուրջ 6,156.4 հազար ԱՄՆ դոլար (LIBOR+2 տոկոսադրույքով), որի օգտագործման դիմաց 2007 թվականին պետական բյուջե կմուտքագրվի շուրջ 244.2 հազար ԱՄՆ դոլար կամ շուրջ 87.2 մլն դրամ:

ե) ՀՀ առևտրային բանկերում ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորող համակարգի ամրապնդման ծրագիրն իրականացնելու նպատակով համաձայն 2005 թվականի հուլիսի 8-ին KfW-ի (Կրեդիտանշտալդ Ֆյուր Վիդերաուֆբաու) և Հայաստանի Հանրապետության Կառավարության՝ ի դեմս ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության և Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի միջև կնքված պայմանագրի, KfW-ն տրամադրում է 3,500.0 հազար Եվրո գումարի վարկ, որի օգտագործման դիմաց 2007 թվականի պետական բյուջե կմուտքագրվի շուրջ 26.6 հազար Եվրո կամ շուրջ 12.4 մլն դրամ (1 Եվրո = 466 դրամ) տոկոսավճար:

3.2 ՀՀ ոչ ռեզիդենտին տրամադրված վարկերի գծով 2007 թվականի մուտքերը կգոյանան Վրաստանի Հանրապետությանը տրամադրված վարկի սպասարկման տոկոսավճարներից, որոնք կկազմեն մոտ 191.4 մլն դրամ (536.1 հազար ԱՄՆ դոլար):

4. Տիրազուրկ, ժառանգության իրավունքով, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանցից (բացառությամբ ՀՀ համայնքների, միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների) նվիրատվության կարգով պետությանը որպես սեփականություն անցած դրամական միջոցներից, ինչպես նաև հիմնական միջոց կամ ոչ նյութական ակտիվ չհանդիսացող գույքի օտարումից ՀՀ 2007 թվականի պետական բյուջեի եկամուտները գնահատվել են 933.0 մլն դրամի չափով, որի մեծ մասը կազմում է «Ռ-Տելեկոմ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետիրոջ կողմից նրա և ՀՀ

կառավարության միջև կնքված նվիրատվության պայմանագրի համաձայն վճարվելիք գումարը, որը կկազմի 892.5 մլն դրամ (2.5 մլն ԱՄՆ դոլար):

5. Իրավախախտումների համար գործադիր, դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից 2007 թվականի մուտքերը ծրագրվել են 2,023.2 մլն դրամի չափով, որը 525.1 մլն դրամով, 537.7 մլն դրամով և 5.0 մլն դրամով գերազանցում է համապատասխանաբար 2005 թվականի փաստացի, 2006 թվականի հաստատված և 2006 թվականի սպասողական գումարները: Կանխատեսումները կատարված են ըստ գանձող մարմինների՝ հաշվի առնելով տվյալ իրավախախտման գծով ընթացիկ տարվա առաջին 7 ամիսների փաստացի մուտքերը, 2004, 2005 թվականների նույն ժամանակահատվածի մուտքերի՝ համապատասխան տարեկան գումարում ունեցած միջին տեսակարար կշռի և 2007 թվականին ակնկալվող տնտեսական աճի ցուցանիշները:

6. Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ պետական բյուջե մուտքագրվող այլ ոչ հարկային եկամուտների գծով 2007 թվականի պետական բյուջեի մուտքերը գնահատվել են 7.2 մլրդ դրամի չափով: Եկամուտների այս խմբի մեծ մասը կազմում են հանքարդյունահանման լիցենզառուների և հանքարդյունահանման հատուկ լիցենզառուների կողմից վճարվելիք ռոյալթիները՝ 3.2 մլրդ դրամի չափով, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ստորաբաժանումների կողմից 2007 թվականին մատուցվելիք ծառայությունների դիմաց վճարները՝ 2.1 մլրդ դրամի չափով, ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության տրամադրման դիմաց վճարները՝ 1.0 մլրդ դրամի չափով: Այս խմբի հաջորդ խոշոր բաղադրիչը «Արմավիա» ՍՊԸ-ի կողմից օդուղիների հատկացման դիմաց վճարն է, որը կկազմի 1 մլն ԱՄՆ դոլար կամ 357.0 մլն դրամ:

I - Բ ԿԱՊԻՏԱԼԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Կապիտալի գործառնություններից եկամուտների գծով ՀՀ 2007 թվականի պետական բյուջեի եկամուտները ծրագրվել են 4.1 մլրդ դրամի չափով, որը 8.2 մլրդ դրամով, 9.5 մլրդ դրամով և 8.3 մլրդ դրամով պակաս է համապատասխանաբար 2006 թվականի հաստատված[24], սպասողական և 2005 թվականին փաստացի ստացված մուտքերից: ՄԺԾԾ-ով ևս 2007 թվականի համար կապիտալի գործառնություններից եկամուտների գծով ծրագրվել է 4.1 մլրդ դրամ:

2007 թվականի համար կապիտալի գործառնություններից եկամուտների գծով ծրագրված 4.1 մլրդ դրամից 4.0 մլրդ դրամն ակնկալվում է ստանալ Երևան քաղաքում պետական սեփականություն հանդիսացող հողերի օտարումից, իսկ մնացած մասը՝ շենքերից և շինություններից բացի պետական սեփականություն հանդիսացող այլ գույքի օտարումից, ինչպես նաև նախորդ տարիներին կնքված առուվաճառքի պայմանագրերից բխող՝ տարաժամկետ վճարումներից:

---

[24] «ՀՀ 2006 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով հաստատված մուտքերից բացի, ներառում է նաև նույն օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ մասով ՀՀ կառավարությանը վերապահված իրավասությունների շրջանակներում 01.10.06թ դրությամբ 8.6 մլրդ դրամի չափով կատարված ավելացումները:

II. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏՐԱՆՍՖԵՐՏՆԵՐ

Օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից 2007 թվականին ակնկալվում է ստանալ 15.2 մլրդ դրամի չափով պաշտոնական տրանսֆերտներ:

Պաշտոնական տրանսֆերտների գծով ՄԺԾԾ-ով նախատեսված 15.0 մլրդ դրամի և Նախագծով առաջարկվող 15.2 մլրդ դրամ գումարների միջև 0.2 մլրդ դրամ տարբերությունը պայմանավորված է ինչպես տրանսֆերտների կառուցվածքի, այնպես էլ հաշվարկների հիմքում դրված 1 եվրոյի և 1 ԱՄՆ դոլարի փոխարժեքի փոփոխություններով (նշված ցուցանիշները ՄԺԾԾ-ի հաշվարկներում կազմել են համապատասխանաբար 535.0 և 450.0 դրամ, Նախագծում՝ 466.0 և 357.0 դրամ):

Մասնավորապես, 2007 թվականին պաշտոնական տրանսֆերտների ստացում է նախատեսվում՝

- Հոլանդիայի թագավորությունից՝ 2.2 մլրդ դրամ,
- Պարենային ապահովության ծրագրի շրջանակներում Եվրոհանձնաժողովից՝ 3.3 մլրդ դրամ,
- Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի միացյալ թագավորության կողմից՝ Հայաստանի Հանրապետության և Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի միացյալ թագավորության միջև ստորագրված աղքատության հաղթահարման բյուջեի աջակցության մասին փոխըմբռնման հուշագրի համաձայն՝ 0.4 մլրդ դրամ:
- Միջազգային ֆինանսական կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների կողմից հատկացվող այլ նպատակային տրանսֆերտների գծով՝ 9.3 մլրդ դրամ, որից «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամից՝ 4.5 մլրդ դրամ: